26 FEB 2013

Երևանից երեսուն կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք, Աշտարակի շրջանի Բյուրական գյուղի մոտ, Արագածի հարավային լանջի վրա կառուցվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նոր Աստղադիտարանը: Աստղադիտարանում տեղավորվում են մի շարք նոր գործիքներ: Միաժամանակ այնտեղ են տեղափոխվում Երևանի Աստղադիտարանի գործիքները:

Բյուրականի Աստղադիտարանը մտադիր է իր ուժերը հիմնականում նվիրել աստղային աստղագիտությանը և հատկապես աստղային վիճակագրությանը:

Սույն պրակով սկսվում է Բյուրականի Աստղադիտարանի հաղորդումների հրատարակությունը: Այդ կապակցությամբ Երևանի Աստղադիտարանի Բյուլետենի հրատարակությունը կարճվում է:

**Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**
**Աստղադիտարանի դիրեկտոր**